ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/27, 21.02.2019թ.

Բողոք բերող անձ՝ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ

Պատվիրատու՝ Շնողի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ԼՄՇՀ-ԳՀԱՊՁԲ-19/03 ծածկագրով գնանշման հարցում / հակակարկտային կայանների ձեռքբերում.

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել Պատվիրատուին ընդունել որոշում, այն է՝ փոխել ԼՄՇՀ-ԳՀԱՊՁԲ-19/03 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 14.02.2019թ. թիվ 1 որոշմամբ հաստատված հակակարկտային կայանների տեխնիկական բնութագիրը՝ վերացնելով նույն բողոքի 2-րդ գլխում նշված, ոչ անհրաժեշտ չափանիշները.

2. Կամ չկայացած հայտարարել ԼՄՇՀ-ԳՀԱՊՁԲ-19/03 ծածկագրով հայտատարված մրցույթի գնման ընթացակարգը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

<u>**Բողոք ներկայացնող անձ՝**</u>
«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ
Տնօրեն՝ Ա. Խաչատրյան
Հասցե՝ ՀՀ, Երևան, Ադոնցի 8, 169
Բանկային տվյալներ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930011489910100
ՀՎՀՀ՝ 00095651
091201773, info@locator.am
tender@locator.am

<u>**Պատվիրատու՝**</u>
ՀՀ, Լոռու մարզ, Շնողի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, 2-րդ փողոց, շենք 4/3

<u>**Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝**</u>
ՀՀ, Լոռու մարզ, Շնողի համայնքի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերում
Ծածկագիր՝ «ԼՄՇՀ-ԳՀԱՊՁԲ-19/03»

ԲՈՂՈՔ

Հարգելի հանձնաժողով,

1. **Բողոքի նախապատմությունը.**

ԼՄՇՀ-ԳՀԱՊՁԲ-19/03 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի 14.02.2019թ. թիվ 1 որոշմամբ ՀՀ. Շնողի համայնքապետարանի կողմից հայտարարվել է հրավեր (այսուհետ՝ Հրավեր)՝ Շնողի համայնքապետարանի կարիքների համար՝ հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով:

«Լոկատոր» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), չնայած նրան, որ հակակարկտային կայաններ արտադրող ընկերություն է, չի մասնակցելու մրցույթին, քանի որ Հրավերում նշված տեխնիկական բնութագիրը, մեր կարծիքով, համապատասխանեցված է միայն Հայաստանի Հանրապետությունում հակակարկտային կայաններ արտադրող «Բարվա» ՍՊ ընկերության հակակարկտային կայանների տեխնիկական բնութագրին, որով էլ կարծում

7388-19
26 02 19

ենք, սահմանափակվում է, ինչպես մեր, այնպես էլ այլ հակակարկտային կայաններ արտադրող ընկերությունների մասնակցության հնարավորությունը:

2. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Գտնում ենք, որ սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Փաստ 1.

Ներարկվող վառելիքի քանակը՝ ոչ ավել 5գ:

Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է կայանի գազի չափաբաժնի ներարկումը այրման խցիկ, ինչպես նաև այրման խցիկի օդափոխությունը պետք է իրականացվի հատուկ էլեկտրական օդամղիչի միջոցով, այրման խցիկը պետք է չուներ որևէ օդափոխության մեխանիկական փական, բացառելով արտաքին բոցի առաջացում:

Գազի ներարկիչը պետք է կահավորված լինի հատուկ հետադարձ փականով, բոցի հետդարձը գազաբաշխիչ համակարգ բացառելու նպատակով: Այդպիսի կայան Հայաստանի Հանրապետությունում արտադրում է միայն «Բարվա» ՍՊԸ-ն:

Փաստ 2.

Հակակարկտային կայանի հիմքը պետք է լինի մեկ ամբողջական 240սմ x 180սմ առնվազն 18սմ հաստությամբ երկաթբետոնե սալից, որը պետք է պատրաստված լինի 16.մմ հաստությամբ ամրանից հյուսված 20սմ x 20սմ շախմատաձև 2 ցանցով, ցանցերի հեռավորությունը միմյանցից 10սմ, լցոնված B15 դասի բետոնոնով:

Փաստ 3.

Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:

Փաստ 4.

Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:

Վերը նշված պայմաններին համապատասխանող տեխնիկական բնութագիր ունի միայն Հայաստանի Հանրապետությունում հակակարկտային կայան արտադրող «Բարվա» ՍՊ ընկերությունը:

Այդ փաստերը վկայում են այն, որ Պատվիրատուն ցանկանում է ձեռք բերել հակակարկտային կայան՝ արտադրված «Բարվա» ՍՊ ընկերության կողմից: Այսինքն, կարծում ենք, որ Պատվիրատուն Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջել է միայն «Բարվա» ՍՊ ընկերության կողմից արտադրվող Զենիթ տեսակի հակարկտային կայան:

3. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

Գտնում ենք, որ մրցույթի հրավերում նշված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին, այդպիսի տեխնիկական բնութագրով սահմանափակվում է այլ հնարավոր մասնակիցների մասնակցությունը մրցույթին և որի հետևանքով կարող են խախտվել ինչպես Ընկերության, այնպես էլ ավելի որակյալ հակակարկտային կայան արտադրող այլ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները. հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Գնման առարկայի բնութագրերը՝

պետք է մրցակցության <u>հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար</u>.

չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է գնումը...»:

Ինչպես նշվել է սույն բողոքի 2-րդ մասում, գնման առարկայի բնութագրերը չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, քանի որ Պատվիրատուի կողմից պահանջվել է այնպիսի հակակարտային կայան, որն արտադրում է միայն «Բարվա» ՍՊ ընկերությունը, այսինքն տեխնիկական բնութագրում Պատվիրատուն դրել է «Բարվա» ՍՊ ընկերության կողմից տրված տեխնիկական բնութագիրը, որով էլ սահմանափակել է այլ հնարավոր մասնակիցների՝ մրցույթին մասնակցելու հնարավորությունը: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ Պատվիրատուն գնման առարկայի բնութագրով պահանջել է այնպիսի բնութագրիչներ, որոնք կարող են լինել այլ տարբերակով և բավարարեն Պատվիրատուի պահանջները:

Օրինակ՝ սույն բողոքի 1-ին փաստում նշված պահանջով, կարծում ենք, որ Պատվիրատուն պետք է պահանջեր ոչ թե կոնկրետ անվտանգության համակարգ, այլ այնպիս համակարգ, որն առհասարակ կբացառի արտաքին բոցի առաջացում, որը կարող է լինել ավելի արդյունավետ ու անվտանգ, որը սակայն, Պատվիրատուն հրավերի տեխնիկական բնութագրով սահմանափակել է և պահանջում է կոնկրետ մեկ տեսակի համակարգ, որին համապատասխանում է միայն մեկ ընկերության տեխնիկական բնութագիրը:

Նշված օրինակը վերաբերում է նաև Փաստ 2-ում նշած պահանջին:

Ինչպես նշվել է Փաստ 3 և 4-ում Պատվիրատուի կողմից պահանջված փաստաթղթերին, ապա դարձ ենք համարում նշել, որ այդ փաստաթղթերը թե «Գնումների մասին» ՀՀ օրենքով և

թե գնումների ընթացակարգը կարգավորող այլ իրավական ակտերով Պատվիրատուն նման փաստաթղթեր պահանջելու իրավունք չունի և առհասարակ Հայաստանի Հանրապետությունում նման փաստաթղթեր ոչ մի պետական կամ ոչ պետական հիմնարկ տրամադրելու իրավասություն չունի և չի տրամադրում:

Լսելին. Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված չափանիշները, հակակարտային կայանների արդյունավետ շահագործելու առավելություն չեն կարող տալ և անհասկանալի է թե Պատվիրատուն ինչու է տեխնիկական բնութագրում նշել այնպիսի չափանիշներ, որոնք ոչ միայն սահմանափակում են այլ անձանց մասնակցելու հնարավորությունը, այլև չեն հիմնավորում այդ չափանիշների արդյունավետությունն ու պարտադիր լինելու հանգամանքը:

Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում տեղադրվել են հակակարկտային կայաններ (հիմնականում պետական գնումներով), որոնք չունեն այն չափանիշները, որոնք նշված են վերը նշված տեխնիկական բնութագրում, աշխատում են անխափան և ավելի արդյունավետ ու ժամանակակից են քան այն չափանիշներով հակակարկտային կայանները, որոնք պահանջվում են տեխնիկական բնութագրով:

Եթե Պատվիրատուն կկարողանա համապատասխան փաստաթղթերով հիմնավորել, որ հակակարկտային կայանների՝ տեխնիկական բնութագրում նշված, չափանիշները պարտադիր պայմաններ են և առանց դրանց կամ դրանցից արդյունավետ չափանշներով արտադրված հակակարկտային կայանները, չեն կարող ապահովել այն, ինչը կարող է ապահովել տեխնիկական բնութագրում նշված հակակարկտային կայանները, ապա կարող ենք փաստել, որ Պատվիրատուի պահանջներն իրավաչափ, արդունավետ ու խիստ անհրաժեշտ են:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնի դրույթները՝

խնդրում ենք՝

1. Պարտավորեցնել Պատվիրատուին ընդունել նոր որոշում, այն է՝ փոխել թիվ ԼՄՇՀ-ԳՀԱՊՁԲ-19/03 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի 14.02.2019թ. թիվ 1 որոշմամբ հաստատված հակակարկտային կայանների տեխնիկական բնութագիրը՝ վերացնելով սույն բողոքի 2-րդ գլխում նշած, ոչ անհրաժեշտ չափանիշները.
2. Կամ չկայացած հայտարարել թիվ ԼՄՇՀ-ԳՀԱՊՁԲ-19/03 ծածկագրով հայտարարված մրցույթի ընթացակարգը:

Կից ներկայացնում ենք՝

1. թիվ ԼՄՇՀ-ԳՀԱՊՁԲ-19/03 *ծածկագրով հայտարարված մրցույթի իրավերը,*